

Ս. Խաչիկյան

Հ. ԱՔԵԼՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍՐԽԻՎԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է մեծատաղանդ արվեստագետ Արեւյանի արխիվային հարուստ ժառանգությունը: Նյութերն ըստ իրենց քանակի գրանցված են 7 բաժիններում: Առաջին բաժինն ընդգրկում է արտիստի նամականիները, հեռագրերը, այցեւորմանը ուղղված զանազան անձանց, ինչպես և գրական, թատերական գործիչների նամակները, հասցեագրված Արեւյանին: Նամակների թիվը 56 է, որոնցից հետաքրքրական են Արեւյանի արտասահմանից գրած նամակները 1923, 1924, 1925 թթ., զանազան անձանց և հատկապես եղբորը՝ Ներսեսին: Հայրենիք վերադառնալու անսահման կարոտը երևում է արտիստի գրած նամակների յուրաքանչյուր տողում: Արեւյանը կոչ է անում արտասահմանում գտնվող հայ դերասաններին, գալ միանալ և լծվել Հայաստանի կուլտուրական վերելքին: Նամակներ կան բազմաթիվ գործիչներից, որոնք իրենց հիացմունքն են արտահայտում ի պատասխան Արեւյանի կոչին: Պահպանվում են նամակներ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից, հայ թատրոնի հիմնադիր՝ Գևորգ Չմրշկյանից, Ազնիվ Հրաչյայից, Արշակ Բաֆֆուց (Բաֆֆու որդին) և այլ գործիչներից, մոտ 200 հեռագրեր, Մոսկվայի, Պետերբուրգի, Ադրբեջանի, Վրաստանի, Դերբենտի, Ղզարի, Մյունխենի, Կահիրեի և այլ թատերական ուսանողական սիրող խմբերի կողմից, ինչպես նաև թատերական գործիչներից, որոնց մեջ առանձնապես լալի են ընկնում դերասաններ Ազնիվի, Բրուտոսի, Անդրանիկի, Վահրամ Փափազյանի, Արուս Ոսկանյանի, Մելիք-Փաշայանի, Միկելաձեի, կոմպոզիտոր՝ Անտոն Մալիյանի և մյուսների անունները:

Նրկորդ բաժնում պահպանվում են մեծ քանակությամբ հորեւյանական գրագրություններ, նվիրված արտիստի գործունեության 25, 35, 50-ամյակներին, հորեւյանական կոչեր: Հետաքրքրական է 1907 թ. Հայոց դրամատիկական ընկերության ուղերձը, որը Հովհաննես Արեւյանին բնորոշում է հետևյալ կերպ. «Թանկագին Արեւյան, 25 տարի շարունակ հայ ժողովրդի բարոյական և մտավոր շենքի վարպետներից մեկը եղար Դուք, լույսի և գեղեցիկ աննկուն մարտիկ, փառք Ձեզ: Դուք պայքարեցիք մեր մայրենի գեղեցիկ, կենդանի և վճիտ լեզվի համար: Դուք Ձեր ուժեղ տաղանդով դուրս բաշեցիք խավարից հալածական ու դժբախտ, բայց հզոր ու ազնիվ հոգիներ...»: Նույն խմբի Զարարի և անդամների կողմից ուղարկված մի այլ ուղերձում ասված է. «...Ձեր գեղարվեստի աղբյուրը մարդկային հոգին է, իր տանջանքներով և ուրախությամբ: Դուք տարաք այդ արվեստը դեպի խավար ու տառապող ժողովուրդը: Եվ այժմ չկա մի արհեստավոր, մի բանվոր, որ չճանաչեր գեղեցիկ արվեստի վարպետ Արեւյանին...»:

1908 թ. Բաքվի Առևտրական ուսումնարանի հայ աշակերտները Հովհաննես Արեւյանի բեմական գործունեության առթիվ շքեղ կազմով կոչ են ուղարկում, որը վերնագրված է «Հայ ժողովրդի անխարդախ բարեկամին և նրա անխոնջ մշակին» — «Դուք հարթել եք լուսավորության ճանապարհը նոր-նոր տաղանդների համար: Բազմաթիվ այդ կոչերը բնորոշում են արտիստի աշխատասիրությունը, տոկունությունը, նվիրվածությունը իր մայրենի արվեստին, իր ժողովրդին: Բաքվի ռեալական վարժարանից գրում են — «Հուսահատվել չգիտցող հավատքով մը, վհատիլ չգիտցող տոկունությամբ մը դուք դեպի ձեր նպատակը դիմած եք արգելքները կոխելով, պատվարները խորտակելով, դիցաբանության հերոսի պես...»:

Ուղերձների քանակը հասնում է 60-ի: Հայ կանանց «Մեղու ընկերության» վարչությունից Հովհաննես Արեւյանին գրում են. «Խավարի և հալածանքի օրերում, երբ ազատ խոսքը մեռնում էր նույնիսկ համարձակ շրթունքների վրա, կարողացաք գեղարվեստի նվիրական տաճարի մեջ ազնիվ պայքարի տենչերը և ապագայի վարդագույն երազները վառ պահել...»: Ուշագրություն արժանի է Հայաստանի Լուսավորումատի գրած ուղերձը, նվիրված արտիստի 50-ամյակին՝ «...նրա բեղմնավոր գործունեության տոնակատարությունը Խորհրդային Ադրբեջանում հանդիսանում է Անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական սերտ կապի փայլուն ապացույցներից մեկը»:

3-րդ բաժնում զետեղված են մեծ արտիստի անձնական փաստաթղթերը, պարզևագրերը, մեմուարները:

Անձնական փաստաթղթերից կարևոր են Արելյանին վերաբերող կենսագրական նյութերը. վկայականներ, նրա ծննդյան, ուսումնառության տարիների, նրան ժողովրդական արտիստի կոչում շնորհելու մասին և այլն:

4-րդ բաժինը տպագրված նյութերի, ռեցենզիաների, ծրագրերի, աֆիշաների բաժինն է: Ռեցենզիաների մեծ մասը նվիրված է Արելյանի բեմական գործունեության 25, 50-ամյակներին, կան նաև մահվան առթիվ Փարիզից, Ամերիկայից, Բեռլինից, Լոս-Անճելոսից ստացված գրությունները, գրված բազմաթիվ լեզուներով: Այդ ռեցենզիաների հեղինակներն են՝ Ա. Սմիրնովը, Ի. Տուրկելտաուբը, Ի. Վոլկովը, Զիննետ Ջակիրովը և ուրիշները: Արխիվում գտնվում է «Կոունկ» (Ֆիլադելֆիա), «Ապագա» (Փարիզ), գերմանական Berliner Zeitung, Փարիզի «Պրոլետար», Բաքվի «Կոմունիստ» թերթերի ռեցենզիաների այն համարները, որտեղ խոսվում է Արելյանի արվեստի մասին: Հետաքրքրական է մեծ բանաստեղծ Հակոբ Հակոբյանի հանդիպումը Հովհաննես Արելյանի հետ Թիֆլիսում, Բաքվում: Արխիվում կան հայ աչքի ընկնող արտիստների Միրայել Մանվելյանի, Վաղարշ Վաղարշյանի, Օլգա Գուլազյանի, Մկրտիչ Զանանի և թատերական բազմաթիվ գործիչների ցավակցությունները Արելյանի մահվան առթիվ: Այս բաժնում զետեղված են Հովհաննես Արելյանի անվանական ծրագրերն ու աֆիշաները, որոնց քանակը հասնում է 80-ի: Այդ ծրագրերի և աֆիշաների միջոցով ուսումնասիրողը ծանոթանում է այն փաստերին, թե երբ, ում կողմից և որտեղ են շրջել հայ դերասանական խմբերը: Ծրագրերի մեծ մասը պատկանում է 1895, 1896, 1914, 1932 թթ. բեմադրություններին, ուր անձամբ մասնակցություն է ունեցել Արելյանը:

5-րդ բաժնում տեղավորված են Արելյանի 200-ից ավելի ֆոտո և լիտոգրաֆիկ նկարները կյանքում և բազմաթիվ դերերում — Սվենգալիի «Տրիզրի» նեզեամով (սկսված մեղավորները), եգոր Բուլլըշով (Գորկու եգոր Բուլլըշով), Օթելլո, Նիդարարով, Ֆերդինանդ, Արքա Լիր և այլն: Մի տեսարան Եհնամե բեմադրությունից, խմբանկարներ՝ Հովհաննես Արելյանը Ադամ Սարգսյան-Արևշատյանի և Արամ Վրույրի հետ, Արելյանը Սամարղանդի սիրողների խմբի հետ, Զարար Զարարիի անվան Ադրբեջանական խմբի հետ «Նամուսի» բեմական հագուստներով, խմբանկար, Արելյանը 1922 թ. դերասան Անդրանիկի խմբի հետ Եգիպտոսում:

Արխիվում կան շքեղ ալբոմներ լուսանկարներով, մակագրություններով Զարչուի հայ հասարակությունից նրա բեմական գործունեության 25-ամյա հորելյանի առթիվ, բարեկամներից, բեկերներից՝ Զիսիկ Վալերիանից, Իվան Զարիֆից, Հ. Տոնապետյանից, Րաֆֆուց (Մեխակ-Հակոբյան), Ֆիզենից, Տարտակովից (Պետերբուրգի դերասան): Պահպանվում են այն գործիչների լուսանկարները, որոնք Արելյանի սրտին մոտ էին եղել՝ հայտնի ծովանկարիչ Ալվազովսկու, գրողների՝ Դոստոևսկու, Գրիբոյևովի, Գոգոլի, Լեոնովի և այլոց:

Հաջորդ բաժնում են նրա խաղացած դերերի տեքստերը: Արելյանը բազմաթիվ թարգմանությունների հեղինակ է: Նա թարգմանել է Շեքսպիրի Օթելլոն, Մակբեթը, Պուշկինի «Փլատ ապետը», Օստրովսկու «Անմեղ մեղավորները», Սուխով-Կորիլինի «Կրեչինսկու հարսանիքը» և ռուսական, եվրոպական կլասիկների բազմաթիվ գործեր, որոնց ձևագիր օրինակները գտնվում են արխիվում: Այդ ձևագիր և տպագիր գրքերը կազմում են 150 կտոր, որոնցից մի մասը արտիստը նվեր է ստացել հեղինակներից: Շեքսպիրի լավագույն թարգմանիչ խան Մասեհյանը նվիրել է իր թարգմանած Շեքսպիրի պիեսների հատորյակը և մակագրել «Պ. Հ. Արելյանին սրտագին բարեմաղթություններով նվիրում է թարգմանիչը Հ. Մասեհյան, Վիեննա, 2 դեկտ. 1922 թ.»:

7-րդ բաժնում առանձնացված է Հովհաննես Արելյանի խաղացած դերերի արսեսուարները, խնչպես նաև բեմական հագուստները՝ Լիր Արքայի թիկնոցը երկնագույն մետաքսից, գլխարկը, վրան ոսկեզոծ կլապիտոնով, պարիկը, կոշիկները: Բարխուդարի (Նամուս) արխալուխը առլաս կտորից, փափախը, բեմական ատրճանակը, Օթելլոյի բաճկոնը, գլխարկը, օղազրահը արծաթե թելով հյուսված, խնչպես նաև Արելյանի ձևափայտը, բազկաթուղ, գրասեղանը, մահվան ժպավանները, պսակը, էլբրուսի յուղաներկ նկարը, գործ Դևորգ Բաշինջաղյանի: Նվեր հեղինակից ընծայականով:

Այս տարի արխիվը հարստացավ նոր նյութերով, որը թանգարանին հանձնեց Արելյանի դուստրը՝ Մարիկա Արելյանը: Այդ նյութերը լրացնում և ամրողջական են դարձնում արտիստի անձնական արխիվը: